

ԲԱԺԱՆՈՐՊ ԱԳՐՈՒԹԻՒՆ

Պոչկարիոյ համար	
Տարեկան	10 Ֆր.
Վեցամսեայ	5 »
Արտասահմանի համար Տարեկան	12 »
Վեցամսեայ	6 »
Ամերիկայի համար	
Տարեկան	2.50 ցր.
Վեցամսեայ	1.25 »

ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐԵԼԻ

Պատկերակ սոյո ստացիկ երեսիկ համար 40 սակոյիկ է. իսկ վերջիկ երեսիկ համար 20 սակոյիկ է. երեքիկ ակեյի ակգամներու համար 20 0/10 գեղջ կըլլայ:

# ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇԱՐՄՈՒ ՕՐԵՐԸ

ОТГОВОРНИКЪ: Д-ръ Т. Хр. Стояновъ

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՍԱՆԹԻՄ)

Նամակ եւ դրամ դրկեյ  
Խմբագրութեան հասցիկն

Редакция на вѣстникъ  
«Шаржумъ»  
Варна.

Redaction du journal  
«Charjoum»  
Varna (Bulgarie)

Գրութիւնք եւ լին տրուիր

ՍԵՐ ԳՈՐԾԱԿԱՏԱՐՆԵՐՈՒՆ

Վերջին անգամ կը գիմենք մեր այն գործակատարներուն որոնք տարիով և ամիսներով իրենց քով պահած են թերթիս գանձուած դրամները, և շարունակ մեզմէ ժամանակ կը խնդրեն ու կը խաբեն: Եթէ այս անգամ ալ լուռ մնան մենք ստիպուած պիտի ըլլանք ուրիշ միջոցներու գիմել:

Նոյնպէս և կը խնդրենք մեր այն բաժանորդներէն որք մինչև ցարդ չեն վճարած իրենց բաժնեկիները հաճին անյապաղ մեզ զրկել: որովհետեւ Բ. տարին լրանալուն 2 1/2 ամիս մնաց:

ԱՐԺԱԻԱՆՔԸ

Ծարժումի ընթացքովները անշուշտ ոգեւորութեամբ կարգացին Յրանքիւր թըր-Յայթունկին Հայ յեղափոխականներու մէկ նոր արշաւանքը հաղորդող հեռագիրը, զոր թարգմանած էինք: Հեռագիրը գրուած է կարինէ՝ հնախոյզ Տօթթ. Պէլքի կողմէ: հետեւաբար և հասկանալի է որ թուրք կառավարութեան գրաքննութեան անցնելով, կարելի եղածին չափ անոր ինչպատ ներկայացուած են: Սակայն հակառակ սոր՝ հեռագիրը ուշադրութեամբ քննելով՝ կարելի է զարձեւալ ճիշդ գաղափար մը կազմել խնդրին էական կէտերուն մասին: Զինուած յեղափոխականներու խումբ մը, որ հաւանականաբար Հայ Յ. Գաշակցութեան զինակիր խմբէն մէկն է՝ Ռուսական սահմանը անցնելով, Ալաշկերտի մասերը քրդերէն կը նշմարուի և ընդհարում մը կուենայ հետերին, որու միջոցին կը սպաննուին Տէրվիչ ազան ու շատ մը ուրիշ քրդեր: Տրուած լուրին վրայ Ալաշկերտի գայմազամը կը հասնի զօրքով և տեղի կուենայ կռիւ մը: որ ութը ժամ կը տևի: Որչափ ալ հեռագիրին մէջ թուրքերը ըստ իրենց վաղեմի սովորութեան չնչին թիւ մը—4 ցու-

ցընեն իրենց կորուստը, մեծ խելք մը հարկաւոր չէ գուշակելու համար որ առնուազն զէրօ մը զեղչուած է, երբ մանաւանդ յաիճակովները իրենք եղած են ու խումբը, ինչպէս կը հաղորդուի՝ անոնց հասնելէն առաջ հայ գիւղացիները զինած՝ հետեւաբար և ամէն կարելի եղած նախապատրասութիւն տեսած է ինքնապաշտպանութեան համար: Իրիկուան հասեր է հեծելազօրքը ու զինուորական ուրիշ զօրութիւն և ասոր վրայ հայերը ապաստաներ են հարաւային լեռները: ուստի թէեւ հեռագիրը յալթանակը թուրքերուն կողմը ցուցնել ուզէ, հայերը կը ցեր են թշնամիին զօրութիւնը ճեղքել ու երկրին իւրը մտնել: ինչ որ իրենց նպատակն էր: Ալաշկերտի պէս գաւառի մը մէջ, որ քրդերու կեդրոններէն մէկն է, մինչև իսկ հրացանի մը սլայթիւնը կրնայ անմըջապէս զինուած քրդերու մեծ բազմութիւն մը հաւաքել, հետեւաբար անտարակուսի է որ այսպիսի որոտընդոտ գէպքի մը վրայ՝ զօրքին հետ միասին քանի մը հազար հոգի խուռած էին: Ու բուն մը կարիճներու ասոնց գէմ ամբողջօր մը գիմադրութիւնն ու անվեհեր յառաջ խաղացութիւնը առասպելական զիւցազնութիւնները յիշեցնող գիւցազնութիւն մըն է:

Թէեւ դեռ մանրամասնութիւններ կը պակսին և հայերն ալ բաւական կորուստ տուած են, այսուհանդերձ գէպքը ինքնին ուրախանալի է մեզի համար: որովհետեւ անգամ մըն ալ կը ցուցընէ փրկարար զէնքին զօրութիւնը ու մեռնողներն ալ ինկան իբր հայրենիքի զինուոր թշնամիին գէմ ճակատ առ ճակատ և ոչ թէ խառնութիւն մէջ կամ տունի մէկ անկիւնը խողխողուեցան անասունի պէս:

Այս կարգի կռիւներու մէջ մենք կրնանք դեռ շատ զոհեր տալ, բայց անոնք՝ քաջերու կորուստին ազգած բնական ցաւին հետ մէկտեղ, աւելի պիտի ոգեւորեն ու խրախուսեն

հայուն սիրտը: մինչդեռ խաղաղ կերպով սպաննուած մէկ հայուն իսկ արիւնը կընկճէ ու կը վհատեցնէ զայն: Արիւն թափելու այս երկու տարբեր կերպերը միայն մեր վրայ չէ, որ տարբեր սպաւորութիւններ կը գործեն: նոյնը կը պատահի նաեւ օտարներուն վրայ: Սկիզբէն ի վեր կը տրտնջանք, որ մեր թափած այնքան արիւնը եթէ գիւանազէտներու սիրտը չչարժեց, գէթ իրական համակրութեան հոսանք մըն ալ յառաջ չը բերաւ եւրոպական հասարակութիւններու մէջ: Իայց ասոր պատճառը շատ պարզ է: Մենք մեր ահագին կոտորածներով Եւրոպային ներկայացանք լոկ իբր աշխատասէր, խաղաղ, խեղճ ժողովուրդ մը, որ անկարող ինքզինքը պաշտպանելու մահմետական խուժանէն կը խողխողուէր: և ասոր համար եւրոպացիներուն մէջ մեզի նկատմամբ ծնաւ կարեկցութիւն մը միայն: Իսկ կարեկցութիւնը համակրութիւն չէ, այլ այն զգացումն է, զոր մարդ աղքատներուն, խեղճներուն հանդէպ կը տածէ: Ու ճիշդ այսպէս եւրոպացիին մեզի ըրաւ այն, ինչ որ աղքատի մը կընեն: զբամ զըրկեց, հագուստ զրկեց, ուտելիք զրկեց ու կարեկցութենէն ասանջուող խիղճը հանդարտեցաւ: Սակայն շատ տարբեր պիտի ըլլար արդիւնքը՝ եթէ կարենայինք համակրութիւն ներշնչել անոնց, հիացումի և սիրոյ այն զգացումը, զոր ստրուկ ազգերը կուտի դաշտին մէջ միայն կրնան ձեռք բերել: Ասոր իբր ապացոյց՝ աւելորդ չեմ սեպեր հոս մէջ բերել համառօտ բայց յատկանշական խօսակցութիւն մը, որ «Յրանք-Փուրթըր-Յայթունկի» հեռագրին վրայ՝ տեղի ունեցաւ հոս մեր փանսիօնին մէջ ճաշի ատեն:

Գերմանուհի մը ներկայացուց տեղական թերթ մը, որ հեռագիրը արտասպաճ էր, գիւրմանացի ուսանող մը բարձրաձայն կարգաց զայն: «Խոշո՞ր սուտ մը բացադանչելով՝ երբ հասաւ թուրքերու կողմէ սպաննուածներու թիւին՝ ինչպէս կը լլայ որ ութը

ժամուան կռիւի մը մէջ տաճիկներէն չորս հոգի միայն կը մեռնին»:

— Կը հիանամ, գոչեց բազմարուեստեան վարժարանի օգնական ուսուցիչ մը, կը տեսնեն որ ոյժը իրենց կողմը չէ ու դարձեալ կը կուտին:

— Այդպէս պէտք է ընել ազատելու համար, ըսաւ պուլկար ուսանող մը:

— Այո՛, հայերը հիմա գտած են իրենց պատուաբեր ճամբան, վրայ բերաւ գերմանացի ուրիշ ուսանող մը: շատ աւելի լաւ է զէնքը ձեռքը մեռնիլ քան ձեռքերը կապած:

Ականջները խօսի իշու համբերութիւն քարոզող հայ ազգային փրկիչներուն...

ԿԱՐԻՃ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՕՐԷՆՍ Ա Նոյն.

«Ձայն Հայրենեաց»ի մէջ կը կարդանք Ֆիլիպէէն անհամ ու անլիթ թղթակցութիւն մը «Կորիւն» ստորագրութեամբ: Երբ կարդացի ինձ թուեցաւ թէ բերանին ինչ որ գիւրին է եկած այն գրած է: «Կորիւնը» լաւ պիտի ընէր երբ իբր ըրած քննադատութեան մի հատուած վեր առնէր, սակայն նիւթէս չը չեղելու համար եւ ոչ ալ ներքոյնը յորինելու, չեմ ուզեր երկար բարակ գրել: մի միայն այս չափով պիտի բաւականանամ ըսելու թէ ստալին: Ամերիկայէն «Շարժումի» գրուած թղթակցութիւններէն ո՞ր մէկ կէտն էր «գրպարտութիւն, հայհոյութիւն» լաւ չէ՞ր ըլլար որ կտոր մը մասնանիշ ընէիք ու ապա փաստէիք Պ. «Կորիւն» ու այն ատեն բրած քննադատութիւնիդ գէթ ու եւ ինչորոյ մը հետ կապակցութիւն ունեցած կըլլար: ապա լոկ ելած էք ու կը գրէք բաւականանալով թէ «այդ գրուածներուն ոչ դուք կը հաւատաք եւ ոչ ալ մենք»: Եթէ փաստի ու ապացոյցներու չզիմենք ու ըսենք «չենք հաւատար» համառօտ կամ օ ունում ըսելով: Ես ալ ուրեմն կըսեմ, Օրմանեան հափըզը հեռագիր չէ սուած Լահէլի ժողովին, հրապարակաւ գրուածները զրպարտութիւն են կամ աւելի ճիշդը եթէ ըսենք «Շարժումի» Կ. Պօլսոյ թղթակցը զրպարտութիւն մըն էր ըրաւ չըլլա՞ր կոր: այս պէտք է ըլլայ ըստ ձեր ազգտ



ամէն հայ ալ կուզէ տեղեկ ըլլալ թէ, որչափ որք է րոնչ կերպով կը խնամուին .

Մինչեւ օրս այս գծով թէն 1007 որբեր կը խնամէ Հայաստանի այլեւայլ կողմերը . 65 որբեր բերուած են Գերմանիա, որոնցմէ մի քանին գարձեալ Կ. Պօլիս վերադարձած են . Այլ սակէ վերջը գծով թէն Գերմանիա որբեր չը պիտի բերէ :

Որբանոցները հետեւեալ տեղերը կը գտնուին .

Ա. Պէպէք (Կ. Պօլիս) 1 որբանոց աղջկանց .

Բ. Մէլէրէն (Վիլայէթ Խարբէրթ) 6 որբանոց երկսեռ .

Գ. Հիւլէնիկ (Վիլայէթ Խարբէրթ) 3 որբանոց աղջկանց .

Դ. Բէրլէնլ 2 որբանոց երկսեռ .

Ե. Մարաշ 3 որբանոց երկսեռ .

Զ. Վան 2 որբանոց երկսեռ .

Է. Հալին (Վիլայէթ Ատանա) 2 որբանոց երկսեռ .

Ը. Աթապէյ (Ամասիաի քով) 2 որբանոց երկսեռ . հոս ընկերութիւնը գնած է 4000 օրավար արտ, շաքարային որբերը երկրագործութեան վարձեցնելու համար . նաեւ շինած է դարբնոց, կահագործարան և աղբուսագործարան եւայլն . եայլն . սոյն գործարանաց մէջ կաշիատին նաեւ երեք գերմանացի վաճառներ հայ-որբերուն սովորեցնելու համար :

22-րդ որբանոցն ալ պիտի կառուցանէ ընկերութիւնը Մարաշի մէջ . որոյ ծախքին համար պիտի յատկացուի 475 օսմ. ոսկի : Հոս կարծէք ըսել թէ առ քրտնոցն ընդ մէջ միւս կաթալիկներու որբանոցէն աւելի հոգ կը դրուի թէ՛ մարքութեան և թէ՛ սկարգապահութեան : Երբեմն մեր Ա. Երկրիցն ընդ քահանայ կայսրէն զանաք (նաեւ ի լաւ թէ յամալի ալցնէ) : Ուրախալի է որ աղջկանց մէջ շատեր գոտտու և վարձապետ ըլլալ ընտրած են : Ասոնցմէ գրեթէ մեծամասնութիւնը խնամածն ունին Գերմանիոյ մէջ . որքան միշտ կը գրեն և այդ նամակներուն նայելով շատ երջանիկ կը գտնեն իրենց վիճակը, քան միւս որբերն, որոնք դեռ Հայաստանի խուլ անկիւնները առթի և ոտքերնին բաց կը թափառին :

Վերոյիշեալ ընկերութեան վարչին է հանրաձայնութեան հայասէր Տ. Լոհման (տես Իրաւունք 1897 թուիս . թիւ 41) որն նաեւ ծանօթ է «Շարժում» ընթացողաց իր անցեալ տարուան դէպի Հայաստան ըրած ճամբորդութիւնովը . նաեւ ընկերութեան կառուցող-գործիչներէն է Տ. Պրօքէս, այսօր անկողնակալ ինձը մեր թըլուսաւ աղբ ալցնողն կը սիրէ որ, երբ իր Պէպէք եղած միջոցին իրեն արու գաւազ մը ծնաւ, զայն կարագետ անուամբ մկրտել

տուաւ . Սա ալ գնաց Հայաստան, մինչև Մարաշ, Ձէյթուն, բայց դժբախտաբար իր Ձէյթունի մէջ խօսած քարոզին պատճառաւ, որոյ նիւթն էր «Արիւնով փրկուեցանք» Սուլթանը զանի թորքիսէն հեռացնել տուաւ : Տ. Պրօքէս իր սկսած բարեգործութիւնը չը լքանեց, այլ հիմա եկած է Գերմանիա և դարձեալ կաշիատի մեր աղբին համար : Անցեալները ամսաթիւներ մը մէջ գրած էր մեր աղբին, եկեղեցւոյ և մարտիրոսներու մասին և իր գրութիւնը կը վերջացնէր հետեւեալով .

«Մեր բարեբարնեքուս պարտքը ըլլալու է անկեղծաբար օրնել այն թշուառաց և իրենց եկեղեցիէն չի հեռացնել ոչ ոք» :

Չը մոռնամ ըսել որբերը դատարարներու զգալի մեծամասնութիւնը հայեր են :

Հալինի մէջ օգոստոս 31ին ժամը զիշերուան 12ին հրդեհ պատահած և մինչև առաւօտեան ժամը 4 տեսած է : 200 ընտանիք (1000 հոգի) անապատան մնացած են : Գերման նամակագիրը շատ արուր կը նկարագրէ այդ թշուառներու վիճակը . նա գերման գլխաւոր բարեբարներէն ողորմութիւն կը հայցէ : Եթէ այսպէս անապատան մնան, կը գրէ, ձմրան ցուրտին զոհ պիտի լինին :

Աւելի նամակ մըն ալ Մարաշի թշուառներու վիճակը կը ծանօթացնէ և իր նամակը սպայէս կը վերջացնէ . «ոչ հաց կայ և ոչ գործ» :

Այս շարժումը Արմիսէն հետեւեալ նամակն ստացայ ստորի բարեկամէ մը . «քառասուն օր է որ տուն հասած եմ և մինչև օրս 4 քրտնոցն ու պաննուեցան (հայ կամ ասորի) : Վիճակն շատ դէժ է, բնաւ ապահովութիւն չը կայ . ամէն տեղ գողութիւն և մարդասպանութիւն սովորական են դարձած : Անցեալները հոս հիմակալու անաղնորդին եղբայրը կուրսպտեցին, առին անոր 1500 բուրդին և զգետները ու թըլուսաւ վիճակի մէջ ձգեցին զինքը : Այժմ ալ կայ . շատեր օրերով անօթի կը մնան, առանց բան մը ուտելու : Հոս կը լսեմ թէ, Բիւրտիստանի մօտ քիւրտերը երեք գիւղեր թալանած և 22 սպաննած են :

Աստուած աղաթ մեզ այս փիճակէն . . .

ԳԵՂՈՒՆԻ

ՊՈՍԴՈՆ . 7 նոյեմբեր

Ամերիկայի հայերը օրէ օր կը յառաջադիմեն, մտաւոր զարգացումը իր խոշոր քայլերը կառնէ : Գեռ շարս հինգ տարի առաջ գաղափարական տարբերութիւններ պատճառ կը ըլլային մեծ մեծ կոխներու, ժողովարահներու մէջ աթուրներու և լեւէջը սովորական վախումը դարձած էր ժողովներուն, ու

այն արդեւ կը դառնար գաղափարի ազատ արտայայտութեան : Խօսողը ստիպուած էր սանձահարել իր զգացումները, շոյել ժողովուրդը, բնածնեքը երկրի միջոցով սրբապի . . . կար չը պատահէր :

Այսօր ալ այդ երեւոյթները չկան, անցած է գաղափարի վրայ բռնանալու ժամանակը . Ամերիկայի հայը ամենայն պաշարիւնութեամբ կը յսէ ամենէն կծու քննադատը ու առանց բորբոքելու կը մեկնի ժողովարահէն, եթէ նոյն իսկ հոն իր սրբատին շատ նուիրական եզրը գաղափար մը սկզբունք մը հարուածուած է . ու կապակէ իր կարգին իր փաստերով պաշտպանել իր համոզումները : Խնամական կարեւորը գաղափարական շփումներու փոխուած են . ու առ է որ կը նպաստէ Ամերիկահայու մտաւոր ու գաղափարական յառաջադիմութեան :

Բայց զուրկ չենք տղայամիտներէ ալ . դեռ կան սմանք որ ժողովուրդի յառաջադիմութեան հետ քայլ չեն կրնար պահել, ծոյլ զինուորներու պէս միշտ ետ կը մնան ու յաճախ ետ կը դառնան : Առ ցաւալի է ըսել թէ այս դասակարգի մէջ կը գտնուին ուսեալ դասակարգէն—գէթ ինքզինքնին ուսեալ կարծողներէն—անձնաւորութիւններ :

Ասոնցմէ սմանք քննադատի հովեր առնող ժողովուրդի պաշարիւնութիւնը շարաշար կը դործածեն . պարզ խօսքով կիրքերու աղբեցութեան տակ կը խօսին ու կը գրեն, զուրկ են լըրջութեան . բան մը հասկցնելու զկարողութիւնը մը տարածելու միտումը չունին և . . . պիղծ լեզու ու զրկ չը գործածեն :

Նիւեօրք հրատարակուող «Չայն Հայրենեաց» թերթէն նմոշ մը տամ ձեզի որ կրնաք գաղափար մը կազմել :

Պարոն մը Ս. Մ. ստորագրութեամբ (ինք Սէ Մէն շինած է ստորագրութիւնը իր օվ ըլլալը շփոթելու համար) Պողոտի Դաշնակցական կոմիտէի հրատարակային ժողովը կը քննադատէ ու տեսէք թէ ինչպէս . «վերջին ատենախօսը բէմ ելաւ . . . ու պէտք է ըսեմ հոս ալ յուսախաբութիւն, կարճահասակ, նիհար, տափակ գլխարկով» :

Կը տեսնաւ ընթացող փոխանակ ատենախօսի խօսածները քննադատելու Պ. Ս. Մ. Ֆիլչարկցի երիտասարդը, կը քննադատէ ատենախօսը կազմական տեսակէտէ, բան մը որ մեր անզարգացած հայերը կընէին Պարոնեանի օրով և փաստոր ապտակը կերած անկէ : Առ այս խղճուկ քննադատը նոյնիսկ տեսնախօսի բառերը չէր կրցած հասկնալ : Ատենախօսը «Հայաստանի նահանգային վարչութիւն» ըսաւ և որովհետեւ Պ. Ս. Մ. վե-

րակազմեալ Հնչակեան է ու առաջին անգամ «Նահանգային վարչութիւն» բառերը իրենց ներքին կանոնագրին մէջ տեսած է, այս վերջնոյն հետ շփոթելով այնպէս կը ներկայացունէ թէ ատենախօս «Արժարական» Հնչակեանները ակնարկեց «Վարչութիւն» բառը գործածելով : Խըմբաղիր ալ ունինք այս կարգի նոյնիսկ այդ «հայնոյնաց» թերթի խմբագիրը որ գէթ իր ընթացողներուն չի խղճար գաղափարի տեղ հայհոյանք լուտայ անոնց :

«Դիտող» անուան տակ ծպտած՝ ձեր թղթակցին անուան վրայ կը յարձակի ու կը վերջացունէ ստախօս անուանելով զայն, դիտեք ինչո՞ւ, ըսեմ :

Ես գրեցի թէ «Իմ թղթակցութիւններս «Շարժում» մէջ երեւնալէն վերջ Մարաշեան հանգանակութեան սկսեց» . Պ. Դիտող զիս ստա հանելու համար կը պնդէ թէ «Շարժում» Ամերիկահասած է օգոստոսին, մինչդեռ հանգանակութիւնը սկսած է յուլիս 30ին : Միթէ՞ «Թղթակցութիւն» «Շարժում» մէջ երեւան գալ» կը նշանակէ Ամերիկահասանիլ . թերթը կրնար ճամբան կորսուիլ և ձեր ձեռք չը հասնիլ Պ. Դիտող և այդ ձեռք համար պիտի նշանակէր թէ բնաւ երեւան եկած չէ այնպէ՞ս չէ . Իմ այդ թղթակցութեամբ ես ուզած էի յոյս տալ թէ ոչ միայն սակէ առաջ այդ խնդրոյ ստիպու գրած հուպա նոյնիսկ անոր հրատարակուած ատենը տակաւին սկսուած ալ չէր հանգանակութիւնը ալ ուր կը մնար «վերջացած» ըլլալը որ Դիտողը կը ջանար ցոյց տալ :

Ահա այսպէս զարգացած հասարակութեան մէջ «կոյր» դիտողներ ալ ունինք : Աս ալ կը փոխուի :

110

ԶԲԱՒՈՐ ԴԻԱՆԱԳԵՏՆԵՐԸ

Կ. Պօլսէն նոյեմ. 9ին «Մարաշ-Ֆուրթըր-Յայթունկ» կը հաղորդեն հետեւեալը .

Ֆերիտուն պէյ, երբեմն Պէլկրատի Օսմանեան ղեկավար քանի մը տարիէ ի վեր անպաշտօն Փարիզ կապիէր և միեւնոյն ատեն նոյն փորձերը կընէր . ինչ որ իր զանազան պաշտօնակիցները, որոնք նոյնպէս լըուած էին պետութեանէն : Ան գիտէր որ Սուլթանէն այն ժամանակ միայն կարելի է բան մը բրցնել՝ երբ մարդ մերժէ Պօլիս վերադառնալ ու Սէնի ափը իր կարգին սպասէ, հանդարտ կամ իբր ինքնակող դատողի մը խալիֆային դէմ : Բայց ֆերիտուն պէյ աղբէն երեք տարիէ ի վեր ի զուր կը սպասէր զիւր անապատական մեծ պաշտօնի մը և անշուշտ ի վերջոյ պիտի համակերպէր ու Պօլիս պիտի վերադառնար՝ եթէ անակըն-

կալ բազմի մը չի հանդիպէր . Ահա թէ ինչպէս . Փարիզի փողոցներուն մէջ հանդիպեցաւ փախստական հազարապետ Յի. քրի պէյին որու հետ ազմկալից վիճաբանութեան մը բնութեցաւ , այս միջոցին Յի. քրի ձերբակալուեցաւ . Ֆրանսական ոստիկանութեան կողմէ : Շահագէտ ներհատուն անմիջապէս կը հեռագրէ Երևանի պալատը թէ ինքը թըրքական կայսրութեան շահերը և Սուլթանի ուրբ անձը պաշտպանելու համար յիշեալ հազարապետին հետ վէճի բռնուած և անոր ձերբակալութիւնը յաջողցուցած էր : Այս ղեկուցումին վրայ կարծիք փոխուեցին անմիջապէս շնորհակալութեան հեռագիր մը եկաւ Սուլթանի առաջին սենեկապետէն և ասկէ զատ քիչ մը ժամանակ վերջը ճանապարհածախքով միասին հրաւեր մը ստացաւ Սուլթանին ներկայանալու : Փէրիտուն եկաւ , երկու անգամ տեսաւ Սուլթանը , բարձր շքանշաններով ծածկուեցաւ և վերստին դարձաւ Սէնի ափը 200 ոսկի ամսականով « ընդհանուր քննիչ ֆրանսայի թիւրք ուսանողներու » ախտոսով : Ամբողջ ֆրանսայի մէջ եօթը թիւրքեր կուսանին : Ուրիշ թիւրք գիտանագէտ մը Գասըմ պէյ Պաքէշի գետնայն , ամիսներէ ի վեր իր պաշտօնը ձգած Լոնտոն կապրի : Գրան բոլոր ջանքերը , զինքը վերադարձնելու համար մինչև հիմա ապարդիւն մնացած էին : Գասըմ 11 ամիսներէ ի վեր երբէք ամսական չէ ստացած և ամէն պարագայի մէջ իր պատկանած իշխանութեան փափաքին պիտի համաձայնի՝ եթէ միայն իր եկամուտները կարգադրուին :

Աւելի տխուր էր անցեալ շաբաթ մեռնող Մատրիտի թըքական ղեկապան Նէճիպ պէյի ճակատագիրը : Հոս ծեր , բարի պարտնը ժողովուրդի բերնին մէջ լոկ « Մէօսիէօ Նէճիպ » կը կոչուի : Ասոր համար թերեւս , որ հակառակ մահմետական հասարակութեան բարեբեքին շատ քիչ բան ունէր ու իր ընթացքով կատարեալ ֆրէնկ էր : Մատրիտի մէջ չմեռաւ ան , այլ Պարչէլունայի մէջ : Արդէն զարնան թողուց Սպանիական մայրաքաղաքը , իր հայրենիքը նաեւ խեղճօրէն ներկայացնելու որովհետեւ բաւականաչափ միջոցներ չէին հասներ իրեն : Պարչէլունայի մէջ ծայրայեղօրէն համեստ կեանք մը կանցունէր , ու հոն իր մահուամբ միայն իմացան թէ ո՞վ էր այն համեստ մարդը , որ այնքան ժամանակէ ի վեր իրենց մէջ կապրէր : Մատրիտի պաշտօնին ետեւէն է Սօֆիաի կայսերական գումիսէր Նէճիպ Մէլի համէ , որ Նէճիպի մահուան լուրին վրայ անմիջապէս հոս հասաւ : Այսուհանդերձ աներկբայէ որ խնամակալ թագուհին ընդուն-

նելութիւնն ու հաւանութիւնը պիտի մերժէ :

Լոնտոնի ղեկապան Քոսթաքի Անթոնիոս փաշա , որ ամիսներու ամբողջ շարք մը Պօլիս կը սպասէր , կրկին իր պաշտօնատեղին վերադարձաւ : Սուլթանը անոր տարեկան թոշակը մտաւորապէս 25,000 մարք բարձրացուց : Ասկէ կը հետեւի թէ բարձր շրջանակներու մէջ Անգլիայի լուսագոյն յարաբերութիւններու կարեւորութիւն կուտան : Բայց Անթոնիոս նախ նափօրի կերթալ , ուր զանազան երիտասարդ թիւրքերու հետ պիտի բանակցի թարգմ. 4.

« Ի Ր Ա Ի Ո Ւ Ն Ք Ո Ւ Ն »

Քաւ լիցի , միթէ՞ « Իրաւունքոր խմբագիրը կարող է վատ լինել . այն խմբագիրը որ հայի դարեւոր ստրկական կեանքի ստեղծագործութեան « զլուխ գործոց » ներից է :

Ու այդ « զլուխ գործոց » լինելու հանգամանքն է որ Պարոն խմբագրին ստիպեց . « խաչագողութեան առթիւ » յօդուածի մէջ , նորից բուն հարցը մի կողմ թողնել և « քառակուսի » սուտերով վարդօրի դէմ դուրս գալ , սպառնալ , Գաշնակցութեան բիւրօյին հրաւեր կարգալ վարդօրի պատժել , եւ գիտէք ինչո՞ւ , որովհետեւ « Իրաւունքոր Պարոն խմբագիրը և իր նմանները վարդօրի « ատուց » են , որովհետեւ նա « Եւրօպայի » խմբագիրն է . . .

Ստեղծք պարոններ , վարդօրի համար այդ պատարեր է , և իրական ու շոյափելի փաստ , որ վարդօր « ձեռքէն » չէ և երբէք էլ չի կարող լինել :

Գալով Գաշնակցութեան ուղղած բարեկամական հրաւերին որ վարդօրի պատժեն , ճշմարիտ սարսափելի է , մանաւանդ երբ այդպէս փափաքում են « Իրաւունքոր » մեծ խմբագիրը և իր նման Գաշնակցականները , եթէ կարող են զոյու թիւն ունենալ այդպիսի Գաշնակցականներ . . .

- Դէ՛հ , ապօն յառաջ
- Մի ձախ մի աջ
- Օն անդր առաջ
- Իր ի խմբագիրք քաջ :

ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ

Էջմիածնի սինօզը խնդրեր է ռուսական ոտար գաւանութեանց հոգեւոր գործերու տեսչութեանն որ , իրաւունք տրուի ամէն տարի երէք ամիսի չափ քահանայ մը զրկել Սիպերիա գտնուող հայ աքորականները հովուելու :

— Էջմիածնայ տիտուին 2000 բուպլի կտակեր է Մնացական տէր Գաւիթեան , և 1000 բուպլի Տիկին Եղիսաբէթ Կրասիկիկեանը : Սինօզը պատուիրեր է վրաստանի և Ղարապաղի հոգե-

ւոր վարչութիւններուն այդ գումարը կտակարարներէն ստանալ :

— Վանայ ներսէս եպիսկոպոսը գրով մը Պատրիարքարինի կը նկարագրէ ժողովրդեան կարօտութիւնը և 2000 ոսկու պէտքը կը ներկայացնէ կարօտեալներունորէն բաշխելու համար և կը յարէ թէ մինչև հիմա Պատրիարքարանէ զրկուած նպաստները անբաւական են ձմրան պէտքը և աւօրեայ կարօտութիւնը դարմանելու : Պատրիարքը յոյս ունի որ իր ըրած վերջին հրաւերով բաւական նպաստ մը ձեռք պիտի զրկէ գաւառները : Նպաստից յանձնաժողովը որոշած է առայժմ ամենէն աւելի կարեւոր և անհրաժեշտ եղած տեղերը մէյ մէկ գումար զրկել յառաջիկայ շաբթու :

— Իսլիմիայի վարժարանը դեռ բացուած չէ տարափոխիկ հիւանդութիւններու պատճառաւ : Այսօր Պատրիարքարան զըրկուեցաւ ի նպատակ Հայաստանի սովելոց 124.75 ֆրանք :

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Սուլթանը իրատէ մը հաներ է յանձնախումբ մը կազմելու , որուն պաշտօնը պիտի ըլլայ քնննել հանրային պարտուց հաշիւները , հաստատել կանոնաւոր հաշուակալութեան հանրային պարտուց վարչութեան և երկու մտից նախարարութեան միջեւ :

— Նոյեմբեր Տին կիրակի օրը , Պօլսոյ մէջ ձերբակալուած են երկու պետական խորհրդականներ և մէկ ուլէմա , մուները խուզարկուած են և յայտնուած է որ ասոնք կասկածելի յարաբերութեանց մէջ եղած են Սուլթանի եղբօրը իշխան Մուհամէտ Բէշաւի հետ , որը գահի հաւանական ժառանգորդն է :

— Անգլիական թերթի մը Բեթրուպուրկի թղթակիցի կը հաւորդէ թէ՛ մէկ նշանաւոր ռուս ժէնէրալ մը և զնդապետ մը իրենց պաշտօնէն հրաժարած են և պիտի երթան Թրանսիլա :

Իսկ Վիէնայի Սթար թերթի թղթակիցը կը հաւորդէ թէ՛ Ռուսիան օգտուելով Թրանսիլաի պատերազմէն Հերատը պիտի տիրապետէ :

— Գերմանական և անգլիական թերթերու մէջ լուրեր երեւցան թէ՛ Չարը հրամայած է կոմս Մուրադիէֆին ձերբակալել Ելեւմտից նախարար Վիթէն , վերջինիս դրամական զանազան սպէքիւլատիօններու անձնատուր ըլլալուն համար , և իբր թէ Վիթէն ուղած է անձնասպան ըլլալ , որովհետեւ Չարը մերժած է ընդունել Վիթէնի կինը :

Թանը կը յայտարարէ թէ խմբագրութիւնը այս լուրը ստուգելու համար հարցուցած է Փարիզի

ռուսական ղեկապանատունը , բայց այնտեղէն պատասխանած են թէ այդ լուր ճիշդ ըլլալու հաւանականութիւնը չունի , որովհետեւ նախարար մը իրաւունք չունի ձերբակալել տալ ուրիշ նախարար մը :

— Պօէրները հասած են Ռուսթոն , Էստքորի և Տիւրպանի յարաբերութիւնը խզուած է . ահա և նոր անգլիական փոքրիկ բանակ մը , որ շղթայված է Պօէրներու կողմէ և սեղմուած : Այս շորորդը կը ըլլայ :

— « Ազատ պետութեան » Պօէրները չը կրնալով համաձայնեցընել Պապուտներուն պետերը , որ տեղացիներուն թոյլ տրուի երթալ Օրանի հունձքերը քաղելու համար , ազդեցիկ անգլիացիներէ կազմուած պատգամաւորութիւն մը զրկած են Անգլիական ներկայացուցիչին այս խնդիրը լուծելու հարցաբ :

Անգլիական բոմբարձը այս խնդիրը բոլորովին մերժած է :

ՏՕԲԹ. Պ. ՕՐՄԱՆԵԱՆ  
(Նախկին Իսլիմիոյ փող. բժիշկ)

Հաստատած է իր բնակութիւնը ի Ֆիլիպէ Պուլկարական պանթալի մօտ , ուր կընդունի ամէն օր ժամը 9—12 և 2—5 հիւանդներ և կը դարմանէ մասնաւորապէս ծննդական գործարանաց , կանանց և արտաքին հիւանդութիւններ , կը կատարէ նաեւ ամէն տեսակ վերաբուժական գործողութիւններ :

Տօրեքշաբթի օրերը կէս օրէ վերջ ժամը 1—3 աղքատները ձրի կը դարմանէ :

Ն Ա Մ Ա Կ Ա Տ Ո Ւ Փ

Ալեքսանդրիւս . — Հայ ընթերցարանին ամբողջ տարի մէն է որ ձեռք թերթ կը զրկուի ադգէն բօսթ-բէյթման ֆրանսէզ , միայն Պօպիզէր բառը չէր տրուած : Հասկցէք այդտեղ :

— Արաբկիրի Մակ գիղէն հայր և որդի Խաչատուր և Պետրոս Ջուռնաճեան որոնք տասը տարիէ ի վեր կորսուած են . կը խնդրուի ամէն անոցմէ որոնք տեղեկութիւն ունին անոնց վրայ հաճին խմբագրութեանս տեղեկութիւն տալ :

— Վանայ կարճ կանից Գոմս գիւղացի Ղարիպ Գրիգորեան , որ Պօլսոյ վերջին գէպքէն վերջը Պուլկարի կը գտնուի եղբ . ով որ կը ճանչնայ այդ անձը թող հաճին իրեն իմաց տալ որ խմբագրութեանս քով նամակ մը ունի :

Թ Ա Տ Ր Ո Ն « Ա Ն Ի Լ Լ Ս Լ Լ Օ Յ »

« Վէսէլոն » հայ թատերական խումբը , վաղը գիշեր , Նոյեմ. 18, պիտի ներկայացնէ « Սէր և մահ » տրամագոմէտի 3 սրար :

Տուէթոս , քանթօ և պալէթ Տ. և Տկ. Տօրէի կողմէ :